№ 208 ՇԱԲԱԹ ՆՈՅԵՄԲԵՐԻ 14 1898 ՇԱԲԱԹ ՆՈՅԵՄԲԵՐԻ 14 № 208

ՔՍԱՆՎԵՑԵՐՈՐԴ ՏԱՐԻ

Տարեկան գինը 10 ռուբլի, կէս տարվան 6 ռուբ.
Առանձին համարները 5 կոպէկով.

Թիֆլիսում գրվում են միմիայն խմբագրատան մէջ.

Մեր հասցէն. Тифлисъ, Редакція „Мшакъ".
Կամ Tiflis, Rédaction „Mschak".
Տէլէֆօն № 253.

ՄՇԱԿ

Խմբագրութիւնը բաց է առաւօտեան 10—2 ժամ
(բացի կիրակի և տօն օրերից)

Ցայտարարութիւն ընդունվում է ամեն լեզուով.

Ցայտարարութիւնների համար վճարվում են
իւրաքանչիւր բառին 2 կոպէկ.
Տէլէֆօն № 253.

ՀԻՄՆԱԴԻՐ ԳՐԻԳՈՐ ԱՐԾՐՈՒՆԻ

ԲԱՑՎԱԾ Է ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ

ԱՌԱՋԻԿԱՑ **1899** ԹԻԱԿԱՆԻ

ՄՇԱԿ

(27-ՐԴ ՏԱՐԻ)

ԳՐԱԿԱՆԱԿԱՆ ԵՒ ՔԱՂԱՔԱԿԱՆ ԼՐԱԳՐԻ

«ՄՇԱԿԸ» ԿԸ ՀՐԱՏԱՐԱԿՎԻ ՆՈՅՆ ՊՐՕԳՐԱՄՄՈՎ ԵՒ ՆՈՅՆ ՈՒՂՂՈՒԹԵԱՄԲ

ԲԱԺԱՆՈՐԴԱԳԻՆԸ. «Մշակի» տարեկան գինը 10 ռուբլի է, տասն և մէկ և տասն ամսվանը՝ 9 ռ., ինն և ութ ամսվանը՝ 8 ռ., եօթ ամսվանը՝ 7 ռ., վեց ամսվանը՝ 6 ռ., հինգ ամսվանը՝ 5 ռ., չորս ամսվանը՝ 4 ռ., երեք ամսվանը՝ 3 ռ., երկու ամսվանը՝ 2 ռ. և մի ամսվանը՝ 1 ռուբլի։

ԱՐՏԱՍԱՀՄԱՆԵԱՆ ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ. Ամերիկայի բաժանորդները պէտք է վճարեն տարեկան 6 դօլլար. Եւրոպայի բաժանորդները՝ 30 ֆրանկ. Պարսկաստանի բաժանորդները՝ 10 ռուբլի։

«ՄՇԱԿԻՆ» գրվել կարելի է ԽՄԲԱԳՐԱՏԱՆԸ (Բաղարտայա և Բարօնսկայա փողոցների անկիւն)։ Կայսրութեան ուրիշ քաղաքներից «ՄՇԱԿԻՆ» գրվելու համար, և առհասարակ նամակներ և ծրարներ ուղարկելիս, պէտք է դիմել հետևեալ հասցէով. ТИФЛИСЪ, Редакція «МШАКЪ»; իսկ արտասահմանից՝ TIFLIS, Rédaction du journal arménien «MSCHAK».

Ցայտարարութիւններ ընդունվում են բոլոր լեզուներով։

ԱՊԱՌԻԿ ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ ՉԷ ԸՆԴՈՒՆՎՈՒՄ

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

Նոյնն ենք մնում. Կայ առանձին ազգայնական ոգի.—ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ. Համալսարանական կրթութեան բէֆօրմը. Վրաց թատրօն. Նամակ Շուշուց. Նամակ Կաղզուանից. Նամակ Խմբագրութեան. Նամակ Խմբագրութեան. Ներքին լուրեր.—ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ. Նամակ Պարսկաստանից. Արտաքին լուրեր. — ՀԵՌԱԳԻՐՆԵՐ.—ՑԱՑՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ.— ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ. Հայ կեանքէն։

ՆՈՅՆՆ ԵՆՔ ՄՆՈՒՄ

Վրա է հասնում ձմեռնամուտը, և ահա՛, ինչպէս միշտ, զանազան տեղերից մենք դառն գանգատներ ենք ստանում տիրող թանգութեան մասին։ Այսպէս, Երևանում և Շուշում հացի պակասութիւնը այնքան զգալի է դարձել, որ տեղական ազգաբնակութիւնը հարկադրված էր դիմել նահանգական իշխանութեան, խնդրելով զսպել այն անկուշտ տգրուկներին, որոնք արհեստական թանգութիւն ստեղծելու համար կը դարձրել շահագործել հասարակական դժբախտութիւնը և այդ պատճառով գնել են հայահատիկների մեծ պաշար, որպէս զի արհեստական թանգութիւն առաջացնեն։ Նահանգապետները, ինչպէս հաղորդում են «Մշակի» թղթակցութիւնները, ուշադրութիւն դարձրին այդ ցաւալի հանգամանքի վրա։ Եւ իրաւ, հարկաւոր չէ երկար ու բարակ նկարագրել, թէ ի՞նչ տառապանքների է ենթարկվում չքաւոր ազգաբնակութիւնը մեր երկրի խիստ ձմեռվայ ժամանակ, երբ թանգանում է հացը և, իբրև հետևանք այդ հանգամանքի, բարձրանում են և միւս կենսական մթերքների գները։ Դա մի կատարեալ չարիք է, որ քամում է ժողովրդի ֆիզիքական ոյժերը, քայքայում է նրա տնտեսութիւնը և վհատութիւն տարածում՝ բազմացնելով աղքատների թիւը։

Տարիների մի երկար շարք բաւական ուժեղ փաստերով ցոյց է տալիս, որ մեր երկրի տնտեսական կարողութիւնը հետզհետէ ընկնում, թուլանում է։ Այդ աղէտալի հանգամանքն է, որ թէև է տալիս հացահատիկների պաշարներ հաւաքողներին. այնքան քիչ է երկրի արդիւնաբերական ոյժը, որ անհատները կարողանում են արհեստական թանգութիւն ստեղծել և անօգնական ազգաբնակութեան արտասունքներից ոսկիներ ձուլել իրանց համար։

Պէ՞տք է ասել՝ որ ուշադրութիւն չը դարձնել տնտեսական այս կարևոր հանգամանքի վրա, նշանակում է անտես անել մեր ամբողջ գոյութիւնը, մեր ապագան։ Բայց մեծ հարցերը մի կողմ թողնենք. մեր արդիւնաբերութեան զարգացման գործը տարիների անդուլ աշխատանք և մեծ կազմակերպութիւն է պահանջում։ Հարցնում ենք. մի՞թէ այնքան անհնարին բան է կռիւ մղել նոյն իսկ մի քանի անհատների դէմ, որոնց համար ձեռնտու է արհեստական թանգութեան միջոցով խեղդել խեղճ ժողովուրդը։ Կարծում ենք որ անհնարին չէ։ Եւ եթէ այդ անհատները կարողանում են հարստահարել ամբողջ քաղաքներ, ամբողջ գաւառներ, դրա պատճառը դարձեալ այն է, որ մեր մէջ չը կայ հասարակական համերաշխութիւն, որ անհատական, եսամոլ զգացմունքները խեղդում են մեզ, թոյլ չը տալով ձեռնարկել որ և է հասարակաշահ, ընդհանուրի օգուտը շօշափող գործ։ Տարիներ են անցնում, հարիւր ու մի տնտեսական աղէտներ թունաւորում են մեր կեանքը, իսկ մենք շարունակում ենք նոյնը մնալ։ Երբ յայտնի է դառնում՝ որ բերքի պակասութիւն կայ և կարող է թանգութիւն առաջանալ, մեզանից ամեն մէկն շտապում է իր համար առանձին պաշարներ կազմել, աշխատում է ապահովել իր դրութիւնը, չը մտածելով այն ահագին բազմութեան մասին, որ զրկված է այդպիսի կարողութիւնից, որ պիտի ամեն տեսակ տառապանքների ենթարկվի մեր աչքի առաջ...

«Ես կուշտ եմ, թո՛ղ միւսը ինչ ուզում է անի»—ահա՛ մեզ պէս մի եսամոլ, անհատականութիւնը կուռք դարձրած ասիացի ժողովրդի ամենամեծ դաղափարը։ Կարողութիւն ունեցողն ապրում է, թո՛ղ անկարողը ոչնչանայ. սա մեր առօրեայ, ամենաբանուկ ճշմարտութիւնն է։ Եւ ահա՛ այդ հրէշաւոր հայեացակէտն է, որ երբէք չէ կարողանում մոտեցնել մարդկանց՝ մի աղէտի դէմ ընդհանուր ոյժով կռուելու։ Մեր մէջ, այո՛, ոչ մի ցաւ չէ բժշկվում հաւաքական խնամքներով։ Եւ հենց այդ պատճառով իւրաքանչիւր երևոյթ, որ հասարակական տառապանքի կերպարանք ունի, կարողանում է անարգել նուաճումներ կատարել, հանդիպելով իր ճանապարհի վրա միայն ցիր ու ցան, ուժասպառ անհատներ։ Միայն ընդհանուր լացն է կարողանում մեզ այնքան շարժել, որ մենք, յանկարծակիի եկած, ափշած, կարօտութիւն ենք զգում անչափահասների նման դիմել խնամակալութեան։ Մի՞թէ նահանգական իշխանութիւնները քիչ գործ ունեն, որ դեռ մեր հացի հոգսն էլ քաշեն։ Մի՞թէ Երևանում կամ Շուշում չէին գտնվի մի խումբ կարող անձինք, որոնք միաբան, անշահասէր գործակցութեամբ մահացու կռիւ սկսէին հարստահարիչների դէմ։ Շատ հեշտ էր անել. փողաւորները կարող էին նոյնպէս հաւաքել հացահատիկների պաշար, բաժանել կարօտող ազգաբնակութեան, թոյլ չը տալով որ նա ընկնի հարստահարիչների ձանկերը։ Այդպիսով թէ՛ ժողովուրդը չէր տանջվի և թէ անգութ հարստահարիչները կը յաղթվէին ու ձեռք կը վերցնէին իրանց ամօթալի արհեստից։ Ինքնօգնութեան գաղափարը միանգամայն չէ կարողանում մեր մէջ արմատ բռնել—ահա՛ թէ ինչից ենք տանջվում...

ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ

ՀԱՑ ԿԵԱՆՔԷՆ

Աղեքսանդրիա, Նոյեմբերի 10-ին

Ռուսահայ գրականութիւնը և Թրքահայ մամուլը—„Արևելքի" նախաձեռնութիւնը—Հին „Մասիս" և „Հայրենիք"։—Պատուէր բաղդատութիւններ։—Հիմակ։

—

«Մշակի» հոկտեմբեր 15-ի թիւէն տեղեկացայ, թէ «Բաղմավէպ» հաշտարար միջնորդի դեր ստանձնած է ռուսահայ գրականութեան նկատմամբ Թիւրքիոյ հայերուն վարմունքը քննադատող քանի մը տողերու մասին, որոնք «Մշակի» մէջ երևցան։ Գրքի կողմէ, և քիչ մըն ալ ամեն քանի կողմէ, աս շատ վայրի երկիրը «Բաղմավէպ» տեսնելը դժուար է, ուստի և չեմ կարող գիտակցօրէն կարծիք յայտնել, թէ «Բաղմավէպ» յաջողած է մեզի պաշտպանել։ Սակայն Եւրոպա գտնուած ատենս կարդացի «Մշակի» գրածները «Մասիսի» թեթևամիտ նկատողութիւններուն առթիւ. ուզեցի քանի մը դիտողութիւն յայտնել, բայց հանգամանքները արգելք եղան. կը գրեմ հիմա։

Տիկին մը—անունը անծանօթ—Թիֆլիսէն վերադարձին, խօսակցութեան մը միջոցին մէկու մը—անունը անծանօթ—քանի մը անոյշաստ կարծիքներ կը յայտնէ ընդդէմ ռուսահայ գրականութեան և մասնաւորապէս Թիֆլիսի Հրատարակչական ընկերութեան. «Մասիս» եռանդոտ փութկոտութեամբ կը հիւրընկալէ ատ կարծիքները, իբր գերագոյն դատավճիռ լրջամիտ հրմտութեան, ու զանոնք կը վաւերացնէ ալ։ Ամ թեթևամտութիւնը ինձի չի զարմացներ. Պօլսոյ հանրային կարծիքին հիմակուան ղեկավարները աղէկ կը ճանչնամ. գիտեմ թէ անոնցմէ ուղղամիտները իսկ, որոնցմէ կը գտնուին «Մասիսի» և անոր յաջորդող «Արևելքի» շուրջը, ոչ ոսկի չքաղրամի և ոչ ալ արծաթի արժանաւոր են ռուսահայերու ընդհանուր կեանքի վերաբերութեամբ իրենց հմտութեանը համար. կը մեղանչեն անմեղօրէն։ Ամ միջադէպին առթիւ պատեհութիւն կը ներկայանայ յիշեցնելու, թէ վերջին տասը տարիները 1884—1895, Թիւրքիոյ հայոց նոր գրողները ձեռնարկած էին ռուսահայ գրականութիւնը այլապէս լրջօրէն ուսումնասիրելով ծանօթացնել Թիւրքիոյ հայերուն, քան թէ տիկնոջ մը դիպուածական ուղեորութեան պատուն հարևանցիկ տպաւորութիւնները։ Անօգուտ չէ անցեալէն ամփոփ յիշատակութիւն մը ներկայացնել։

—

Երբ 1884-ին «Արևելք» օրաթերթը հիմնուեցաւ, ծրագրին մէջ էր ռուսահայերու կեանքին և մասնաւորապէս գրականութեան ընդարձակ ուսումնասիրութիւնը։ Ռուս և թիւրք պատերազմէն ետքը մեր կեցումնիս և մեր փոխադարձ յարաբերութիւններու մտերմութիւնը զգացնել տուին, թէ Թիւրքիոյ հայերը պարտաւոր էին ճանչնալ միտքն ու հոգին Կովկասեան հայերուն, որոնց ներգործութիւնը մեր կեանքին վրայ այնքան հզօր ըլլալ կը թուեր։ «Արևելքի» մէջ սկզբնաւորութիւն եղաւ ռուսահայ կեանքի պատկերացումին, բայց ուրուագծեր միայն։ Գրողները վարանոտ կ'ընթանային՝ զգալով իրենց ռուսահայ դաստիարակութեան թերութիւնը. ոչ միայն սորվեցնելու, այլ և իրենք ալ սորվելու հարկին մէջ կը գտնուէին։ Պէտք էր սակայն առանց շատ ժամանակ կորսնցնելու ժողովուրդը կամացկամաց գործնականապէս ընտելացնել ռուսահայ գրականութեան, ու եռքէն ձեռնարկել աւելի լայնագիծ խորհուրդներու իրականացումին։ Բաֆֆիի երկու գործերը, որոնք «Արևելք» հրատարակեց, յստակօրէն կը պարզեն խմբագրութեան առաջադրութիւնը։ Օրաթերթը Թիւրքիոյ հայերուն ծանօթացուց «Խաժայի Մելիքութիւնները», ընտանի աշխարհաբարի վերածուած, և զգուշաւորական յապաւումներով, որպէս զի կասկած չարթնցնէ։ Կիսկատար մնաց աս գործը, կառավարական արգելքով. բայց և այնպէս ինչ որ հրատարակուեցաւ նպատակին ծառայեց։ Մեզ մօտ ժամանակի մը վիպանման պատկերները դիմեցին հայ ժողովրդին միտքը, և հետաքրքրեցին դէպի Կովկասի կեանքը։ Միւս գիրքը անարգել հրատարակուեցաւ ամբողջապէս։ «Խաչագողի յիշատակներն» էին. արհեստաւոր, խանութպան դասակարգերուն համար շատ ախորժելի գիրք մը, որուն ծաւալումը կը նպաստէր Կովկասեան գրականութիւնը նոյն իսկ շատ քիչ ուսում ունեցողներուն ընտելացնելու դիտաւորութեան։

Քաղաքական նկատումները թոյլ չէին իտար աւելի կորովալիր գրքերու տարածումը օրագրութեան միջոցաւ. օրէօր սակայն Կովկասեան կեանքի տեղեկութիւններու շրջանակը կընդլայնէր և ռուսահայ աշխատակիցներ կը բորբոքէին նորարծարծ եռանդը։ Ամ միջոցներուն «Արևելքի» հիմնադիրներուն միջև թիւրքահայերու գործելու մասին անհամաձայնութիւններ ծագելով, օրաթերթին խմբագիրներէն և աշխատակիցներէն մաս մը «Մասիս» սկսան իբր հանդէս հրատարակել։

Ամ «Մասիսը» ձեռնարկեց աւելի հիմնաւոր ուսումնասիրութեան մը կովկասեան գրականութեան։ Ուզեց քննել բոլոր ան պայմանները, որոնց մէջ կը ծլէր, կը ծաղկէր, կ'ուռճանար կովկասեան միտքը և անոր ծնունդ գրականութիւնը։ Պէտք էր խորապէս ճանչնալ պատմութիւն, կրօնք, երկիր, կլիմայ, դաստիարակութիւն, ամեն ինչ որ կը նպաստէ ժողովրդի մը ոգին կազմակերպութեանը։ Տարակոյս չի կար թէ ռուսական գրականութիւնը հզօրապէս ներգործած պէտք է ըլլար ռուսահայոց ոգին ու գրականութեան վրայ. «Մասիս» սկսաւ բուն ռուսական գրականութիւնն ուսումնասիրել թարգմանութիւններու և եւրոպացի քննադատներու առաջնորդութեամբ։ Թիւրքիոյ հայերը ուրեմն նախ սկսան ռուսական մատենագրութիւնը սորվել «Մասիսի» միջոցաւ, որպէս զի կովկասեան հայ գրականութիւնն ալ աւելի հիմնապէս հասկնալու կարող ըլլայինք։ Ռուսահայ գրականութիւնը կուսումնասիրվէր լայնկէկ ծրագրով։ «Մասիսի» խմբագիրները մշակական էին, բայց կովկասեան մատենագրութիւնը կուզէին քննել, ուսումնասիրել, խմաստասիրել առանց կուսակցական նախապատուութեան։

ՀԱՅ ԱՌԱՆՁԻՆ ԱԶԳԱՅՆԱԿԱՆ ՈԳԻ

II

Միւս գրողներից շատերը, որոնց Ֆինօն դիմել էր՝ խնդրելով որոշել Ֆրանսիական ազգային հանճարի էութիւնը, այնպիսի որոշում են տուել, որ ուրիշ ամեն մի ազգայնութեան համար ևս կարելի է գործադրել։ Ակադէմիկ Ֆրանսուա Կոպպէ յայտնում է, որ անկարող է գտնել յարմար որոշումն Ֆրանսիական ազգային հանճարի համար. սակայն այս կարող է ասել, որ միայն Ֆրանսիայում գրողը կամենում է հզօր լինել առանց տաղտկութեան և խորամիտ առանց մըթութեան։ Դեժարդէն, Անատոլ Ֆրանս, Մարսել Պրէվօ և Ֆրանցիսկ Սարսէ, ֆրանսիական հանճարի տեղեկութիւններու շրջանակը կընդլայնէր և ռուսահայ աշխատակիցներ կը բորբոքէին նորարծարծ եռանդը։ Ամ միջոցներուն «Արևելքի» հիմնադիրներուն միջև թիւրքահայերու գործելու մասին անհամաձայնութիւններ ծագելով, օրաթերթին խմբագիրներէն և աշխատակիցներէն մաս մը «Մասիս» սկսան իբր հանդէս հրատարակել։

Ամ «Մասիսը» ձեռնարկեց աւելի հիմնաւոր ուսումնասիրութեան մը կովկասեան գրականութեան։ Ուզեց քննել բոլոր ան պայմանները, որոնց մէջ կը ծլէր, կը ծաղկէր, կ'ուռճանար կովկասեան միտքը և անոր ծնունդ գրականութիւնը։ Պէտք էր խորապէս ճանչնալ պատմութիւն, կրօնք, երկիր, կլիմայ, դաստիարակութիւն, ամեն ինչ որ կը նպաստէ ժողովրդի մը ոգին կազմակերպութեանը։ Տարակոյս չի կար թէ ռուսական գրականութիւնը հզօրապէս ներգործած պէտք է ըլլար ռուսահայոց ոգին ու գրականութեան վրայ. «Մասիս» սկսաւ բուն ռուսական գրականութիւնն ուսումնասիրել թարգմանութիւններու և եւրոպացի քննադատներու առաջնորդութեամբ։ Թիւրքիոյ հայերը ուրեմն նախ սկսան ռուսական մատենագրութիւնը սորվել «Մասիսի» միջոցաւ, որպէս զի կովկասեան հայ գրականութիւնն ալ աւելի հիմնապէս հասկնալու կարող ըլլայինք։ Ռուսահայ գրականութիւնը կուսումնասիրվէր լայնկէկ ծրագրով։ «Մասիսի» խմբագիրները մշակական էին, բայց կովկասեան մատենագրութիւնը կուզէին քննել, ուսումնասիրել, խմաստասիրել առանց կուսակցական նախապատուութեան։

ճարի իբրև ընորոշ գծեր համարում են շարադրության պարզությունը, ճշդությունը և սիստեմատիկանությունը: Էմիլ Զոլա, համաձայնելով այդ կարծիքի հետ, աւելացնում է նաև, որ ֆրանսիացի գրողին յատուկ է առողջ դատողությունը, միացած ազատամտության հետ և ջերմ սէր դէպի ճշմարտությունն ու արդարությունը: Սակայն Զոլա չէ ընդունում յատուկ ֆրանսիական ոգու գոյությունը, որովհետև նա եւրոպական բոլոր ազգերին բաժանում է երկու խմբի—լատինական, որին պատկանում են նաև ֆրանսիացիները, և հիւսիսային:

Ինչպէս տեսնում ենք արտայայտած կարծիքները ոչ միայն հակասական են միմեանց, այլ և չեն ներկայացնում ճիշդ որոշումն: Այդ պատճառով ինքը Ֆինո հարկաւոր համարեց իր կողմից ևս մանրամասն կարծիք յայտնել՝ աշխատելով լուծել յարուցված հարցը:

Ֆինո յայտնում է, որ կայ ազգային հոգի, որի բազմազան արտայայտություններից մէկն էլ հանդիսանում է ազգային հանճարը. այդ ազգային հոգին կազմվում, դաստիարակվում է ներքին և արտաքին ոյժերի ազդեցությամբ: Ներքին ոյժերն են—ցեղական ժառանգականությունը և միջավայրի ազդեցությունը. արտաքին ոյժերն են—օտարերկրային ազդեցությունները: Ֆրանսիայում չը կայ ցեղական ժառանգականության տարբ, որովհետև ֆրանսիացիները առանձին ցեղ չեն կազմում, այլ մի քաոսական խառնուրդ այն բոլոր ազգերից, որոնք բնակվել են և բնակվում են այսօր Եւրոպայում: Հէնց այդ «զուտարիության» բացակայությունը առաջ է բերել այն հանգամանքը, որ ֆրանսիացին ցեղական թշնամություն չունի ուրիշ ազգերի հետ: Լինելով խառնուրդ ամեն տեսակ ցեղերի, ֆրանսիացիները ազգական են բոլոր ցեղերի հետ. դրանով է բացատրվում ֆրանսիական ազգային բնաւորության այն առանձնայատկությունը, որը դեռ Կանտը նկատել էր. «ֆրանսիացիները—ասում է նա—սէր են տածում դէպի միւս բոլոր ազգերը, նոյն իսկ այն ազգերը, որոնք ատում են նրանց»:

Ամենից շատ միջավայրն է ազդել ֆրանսիական ազգային տիպի կազմության վրա: Մեղմ կլիման և արգաւանդ հողը հայթայթել են նիւթական բարեկեցություն և այդ պատճառով ֆրանսիացիները եւրոպական այժմեան ազգերից շատ առաջ կարողացել են մտնել մտաւոր զարգացման շաւղի մէջ: Ամենահին ժամանակներից սկսած, ֆրանսիական գրականությունը ենթարկվել է արտաքին ազդեցությունների, նա ընդունել է դրսից սաղմեր, աճեցրել, զարգացրել է և յետ տուել ամենածաղկած դրության մէջ: Ֆրանսիական գրականության մէջ անփոփոխ կերպով նկատվում է այն իրողությունը, որ ամեն անգամ, երբ Ֆրանսիան ստանում է դրսից տպաւորություններ, նրա գրականությունը զարգանում է և հասնում ամենամեծ փայլի. իսկ, ընդհակառակը, երբ նա իրան փակել է օտար ազդեցության երեսից, ինչպէս XIV և XV դարերում, ֆրանսիական գրականությունը ոչ մի նշանաւոր բան չէ արտադրել և իր կողմից ևս ոչ մի ազդեցություն չէ գործել դրացիների վրա: XVII-րդ մեծ դարը Ֆրանսիայի համար եղել է փոխառության դար. օտարի ազդեցության տակ զարգացան ֆրանսիացի կլասիք-ազգային գրողները—Կորնէյլ, Մոլիէր, Բասին, Մոնտէսկիո, Բուսսո, Դիդրո և Վոլտէր, որոնք շփվեցին Սպանիայի, Իտալիայի, յոյների և անգլիացիների հետ: 1820—1860 թուականի ժամանակամիջոցում ֆրանսիական գրականությունը ամենից շատ ոգևորվեց և համակվեց օտարերկրեայ ներշնչումներով, բայց երբէք ֆրանսիական գրականությունը այնքան հարուստ, ինքնուրոյն, փառաւոր և շքեղ չէ եղել, ինչպէս այդ ժամանակ, երբ գործում էին Լամարտին, Միւսսէ, Վիկտոր Հիւգո, Սէն-Բէօվ, Ստենդալ, Բալզակ: Նորագոյն ժամանակներում Մերիմէն և Մօպասան յայտնի կերպով ենթարկվեցին Տուրգենեվի ազդեցության: Տօլստոյ, Դոստոէվսկի, Իբսէն և Բիերընսոն անկասկած կերպով հզօր ազդեցություն են գործում ժամանակակից ֆրանսիական գրականության լաւագոյն ոյժերի վրա:

Այդ փաստերի հիման վրա, Ժան Ֆինո կարծում է, թէ այն հաղորդակցությունը, որ հաստատվել է բոլոր լուսաւորված երկրների քաղաքակրթությունների մէջ, ժամանակով պէտք է ստեղծի մի ընդհանուր միջազգային գրականություն և այդ գրականության պտակը պէտք է լինի ֆրանսիական գրականությունը, իբրև մի գրականություն, որ ընդունակ է ամենից շատ ենթարկվել օտար ազդեցության: Հաւասար տաղանդի պայմանների մէջ ֆրանսիացի գրողը աւելի մեծ շանս ունի համաշխարհային հռչակ և փառք ստանալու, քան ուրիշ ազգության գրողը:

Այդ բոլորից Ֆինո եզրակացնում է, որ ֆրանսիական ազգի պատմական պաշտօնն է բացատրել իրան և ուրիշ ազգերին համամարդկային իդէալների էությունը. դրա հետ միասին, նա կարծում է, որ կայ և գոյություն ունի յատուկ ֆրանսիական ոգի, որը համաշխարհային ոգուն:

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ՀԱՄԱԼՍԱՐԱՆԱԿԱՆ ԿՐԹՈՒԹԵԱՆ ՐԷՖՕՐՄԸ

—

Կովկասի ուսումնարանական շրջանի հոգաբարձու պ. Եանօվսկի, որ համարվում է հեղինակաւոր մանկավարժ, մի շարք յօդուածներով, որոնք տպվեցին «Русская Школа» ամսագրի մէջ, առաջարկում է արմատական ռէֆօրմ մտցնել համալսարանական բարձր կրթության սիստեմի մէջ: Հոդաբարձու Եանօվսկին այն կարծիքն է յայտնում, թէ համալսարանի և առհասարակ բարձր կրթական հաստատության նպատակը պիտի լինի ոչ միայն կրթությունը, այլ և դաստիարակությունը և ցաւ է յայտնում, որ համալսարանական երիտասարդության վրա հսկելու պաշտօնը յանձնված է ոստիկանության: Ուսանողների դաստիարակության և կենցաղավարության վրա հսկելու պարտաւորությունը—ասում է յօդուածագիրը—ամբողջովին պէտք է պատկանի համալսարանի վարչության, պրոֆէսորական մարմնին, համալսարանի ռէկտորին:

Անցնելով ապա բուն կրթական մասին, պ. Եանօվսկին բացատրում է համալսարանների անգոհացուցիչ վիճակի պատճառները, այն է՝ 1) առարկաների բազմազանությունը և դասախօսությունների անհնարին բաժանումը, 2) պրոֆէսորների և դասախօսների մեծ մասի անպատրաստականությունը, 3) դասատուության աննպատակայարմար եղանակը, 4) ուսանողների ինքնագործունէության թոյլ զարգացումն և նոյն իսկ բացակայությունը: Ուսանելի առարկաների թիւը հասնում է 20-ի. գիտնական նիւթի այդպիսի մեծ քանակության իւրացնել անհնարին է, եթէ ուսանողը նոյն իսկ ամենափայլուն ընդունակություններ ունենայ. այդ պատճառով նա սովորում է ամեն մի առարկայ հարևանցօրէն և ոչ մի առարկայ հիմնովին չէ սովորում: Այդ հանգամանքը ահագին վնաս է արտադրում և դաստիարակչական տեսակէտից, որովհետև սովորելով հարևանցօրէն վերաբերվել գիտության՝ 4 կամ 5 տարվայ ընթացքում, ուսանողը սովորում է հարևանցօրէն վերաբերվել և ամեն մի բանի կեանքի մէջ:

Բոլորովին այլ կերպ է դրված բարձր, հասարակական կրթության գործը արտասահմանի համալսարաններում և կօլէժներում: Ամերիկական «կօլէժներում» մասնագիտական կրթությունը մերինից շատ առաջ է սկսվում: Ամերիկացիները համոզված են, թէ քանի որ այժմեան գիտությունների թիւը ահագին է և դիլետանտությունը վնասակար, անհրաժեշտ է առաջուց ընտրել մի քանի գիտություն և հիմնովին ուսումնասիրել միայն այդ գիտությունները:

Դասախօսության այժմեան եղանակը ևս յօդուածի հեղինակն անյարմար է գտնում. նրա կարծիքով, աւելի լաւ կը լինի դասախօսական եղանակը փոխել և նրա տեղ թոյլ տալ, որ ուսանողները ինքնուրոյն կերպով զբաղվեն:

Առաջարկելով նոր ռէժիմ և ռէֆօրմ մտցնել հասարակական կրթության մէջ, պ. Եանօվսկի կարծում է, որ այդ նոր ռէժիմը բոլորովին կը փոխի հասարակական կրթության բնաւորությունը և ոգին. առաջ կը դայ այն ինքնագործունէությունը, որի պակասությունից այնքան վնասվում է ժամանակակից երիտասարդությունը. դէպի գիտությունն ունեցած կրաւորական յարաբերությունը կը վերածվի ներգործականի. ուսանողները կը զարգանան ֆիզիքապէս ու մտաւորապէս և հասարակությունը ևս մեծ օգուտ կը ստանայ:

Քննելով Եանօվսկու յայտնած մտքերը, Պետերբուրգի համալսարանի ռէկտոր՝ պրոֆէսոր Սերգէեվիչ այն կարծիքն է յայտնում, թէ որքան էլ կատարելությունից հեռու է համալսարանական կրթության այժմեան եղանակը, այնուամենայնիւ նա պ. Եանօվսկու առաջարկած վերանորոգչական սիստէմից շատ և շատ լաւ է: «Համալսարանական կրթության նպատակը—ասում է պրոֆէսորը, այն չէ որ սովորեցնի ուսանողին երկու գրքի հիման վրա երրորդը գրել, համալսարանները կոչված չեն կոմպիլատորներ պատրաստել. ուսման գործը ազատության գործ է. ով գնահատում է գիտությունը, ում համար նա թանգ է, այդպիսին և՛ կը լսի և՛ կը կարդայ. ով չէ ուզում սովորել, նա ոչ համալսարանում, ոչ էլ համալսարանից դուրս ոչինչ չի սովորի: Ուսանողները շատ ազատ ժամանակ ունեն, բայց չեն օգտվում այդ ազատ ժամանակից:»

ՎՐԱՑ ԹԱՏՐՕՆ

—

Վերջապէս, նոյեմբերի 5-ին, վրաց թատրոնը բացեց իր փոքրիկ, բայց ծանրաշարժ դռները, փոքրաթիւ հասարակության ներկայությամբ: Այնքան ուշ սկսվելու պատճառը ղեկավար չունենալն էր: Ահա մի քանի ժանրամասնություններ: Անցեալ տարի բեմը պահում էր երիտասարդների մի խումբ, որը այս տարի հրաժարվեց այդ ողորմությունն անելու հասարակությանը. այդպիսով գործը մնաց նոր կոմիտէին, որը իր կողմից նոյնպէս անկարելի գտաւ խումբ պահել՝ միջոց չունենալու պատճառով, և վճռեց նպաստ տալ դերասանների ընկերության կամ մասնաւոր մարդուն, որը յանձն կառնի խմբի պահելը: Սակայն, ներկայ պայմանների մէջ, դերասանների ընկերությունը երաշ էր, իսկ անտրեպրիզա ստեղծելը ցնորք: այդ պատճառով վրաց դրամատիական ընկերության ընդհանուր ժողովը պահանջեց, որ կոմիտէը ինքը պահի խումբը: Այդ վճռի հետևանքն եղաւ այն, որ կոմիտէի մեծամասնությունը հրաժարվեց իր պաշտօնից և հների տեղ ընտրվեցին նոր անդամներ, այն էլ տանավարի կերպով: Սրանք երկար մտածեցին՝ թէ ինչպէս պահեն խումբը՝ ունենալով ընդամենը 800 ր., և եկան այն եզրակացության, որ դերասանների ռոճիկները պէտք է կրճատվեն հաւասար 25%, որով կոմիտէը միջոց կունենայ ծայրը ծայրին հասցնել: Սակայն այս որոշումը մնաց թղթի վրա, իսկ իրականության մէջ դուրս եկաւ խրնամություն: Այդ ուլտիմատումը դերասաններից մի քանիսն ընդունեցին:

Ընդհանրապէս այս տարվայ խումբը շատ թոյլ է. խմբի մէջ չը կան տ.տ. Սափարօվա, իշխ. Աւալօվա (երկուսն էլ հիւանդության պատճառով) և Գամկրելիձէ. պ.պ. Գամկրելիձէ, Գեղեվանօվ, Ադամիձէ, Մճեդլիձէ և այլն: Այժմեան կոմիտէը, ինչպէս երևում է, աւելի ծառայում է մի քանի անձնաւորություններին, քան թէ գործին. եթէ ոչ՝ ինչով բացատրել այնպիսի շնորհալի և տաղանդաւոր դերասանի բացակայությունը, ինչպէս է պ. Ալեքսէեվ-Մեսխիեվ, որը ամբողջ հասարակության կողմից սիրված ու յարգված է, և որի ներկայությունը պատիւ կը բերի նոյն իսկ եւրոպական մի բեմի: Պիէսների ընտրությունն անաջող է և խաղը վերին աստիճանի տաղտկալի: Դերակատարներ չունենալու պատճառով դերերն անաջող են բաժանվում և այդ պատճառով դուրս է գալիս միմոսություն և դատարկություն: Հանդիսատեսը ոչ մի բան չէ ստանում: Ամենից աւելի տանջվեցան Գամկրելիձէ, Գեղեվանօվ, Ադամիձէ, Մճեդլիձէ և այլն: Այժմեան կոմիտէը, ինչպէս երևում է, աւելի ծառայում է մի քանի անձնաւորություններին, քան թէ գործին. եթէ ոչ՝ ինչով բացատրել այնպիսի շնորհալի և տաղանդաւոր դերասանի բացակայությունը, ինչպէս է պ. Ալեքսէեվ-Մեսխիեվ, որը ամբողջ հասարակության կողմից սիրված ու յարգված է, և որի ներկայությունը պատիւ կը բերի նոյն իսկ եւրոպական մի բեմի: Պիէսների ընտրությունն անաջող է և խաղը վերին աստիճանի տաղտկալի: Դերակատարներ չունենալու պատճառով դերերն անաջող են բաժանվում և այդ պատճառով դուրս է գալիս միմոսություն և դատարկություն, փառքի մի ուրիշ գոհացում չի կայ իրեն համար: Բաղդատության աս եզրները կրնան իրականության համապատասխանել կամ ոչ, բայց ատ համեմատությունները նշան մը չեն թէ Թիւրքիոյ հայերը որպիսի յարգական համակրանք կը տածեն ռուսահայ մատենագրության համար:

—

Հիմա ատ բոլոր գրողները ցիրուցան են Եւրոպա ու Ամերիկէ. ազգին հիմակուան վիճակին մէջ իրենց վրայ ուրիշ պարտականություններ կը ծանրանան, անոնց համար կը գրեն: Բայց և այնպէս ռուսահայ մտքի արտադրությունները չի մոռցուեցան: Արշակ Զօպանեան հիմնելով Բարիզ «Անահիտը», մեծ տեղ մը պիտի տայ ռուսահայ գրականության ատ հանդէսին մէջ:

Ու վերջացնելու համար ըսեմ, որ եթէ արտասահման հրատարակուող թերթերու մէջ կ'երևին քննադատություններ ընդդէմ ռուսահայերու, կամ աւելի ճիշդը՝ ընդդէմ մաս մը ռուսահայերու, ատոնք բնաւ առընչություն չունին գրական հարցերու հետ: Ատոնց մասին «Մշակի» մէջ որ և է խնդիր ծագած չըլլալով, հարկ չեմ տեսներ դիտողություններ ներկայացնել: Կը բաւականանամ միայն ըսելով թէ՝ ատոնցմէ շատերուն նիւթը «Մշակէն» առնուած է: Թէ գաղթականներու և թէ ուրիշ գործերու մասին «Մշակի» տեղեկությունները, խմբագրականները առաջնորդած են գրողները: Վերջապէս «Մշակէն» աւելի ռուսահայ ըլլալ կարելի չէ:

***

Օր մը ևս «Մասիս» ինքնիրենը ջնջուեցաւ. 90-ի հովն էր փչած. ցիրուցան անող խմբագիրները: Վերջակէտ մը դրուեցաւ ռուսահայ կեանքին լուրջ ուսումնասիրության:

—

«Հայրենիքի» հիմնարկությունը ատ վերջակէտը պիտի ջնջէր. նորէն հետաքրքրություն և ուսումնասիրություն ռուսահայ կեանքին. բայց 1891-ին համար շատ ճիշտ էր «ժամանակները փոխուած են» բացատրությունը: Հիմա թիւրք կառավարությունը, ժամանակ ոստիկանության պետ Նազրի պէյ, ծայրայեղ կասկածոտությամբ կը հսկէր ռուսահայերու ձգտող համակրանքներուն. բնականաբար նոր հիմնուած թերթը իր կեանքը պահպանելու համար զգուշաւոր ընթացքի մը պիտի հետևէր: Բարեբաղդաբար թիւրքը ոչ մէկ գործ ամբողջովին ընդգրկելու ընդունակ է. կովկասեան թերթերուն Թիւրքիա մուտքը արգիլել մոռցած էին. «Հայրենիք» հիմնուելով ան նկատողության վրա, թէ ինչ որ արգելուած չէ, կրնայ ներուած համարուիլ, կ'ըզբաղէր ռուսահայ գործերով և հրատարակություններով, միշտ սակայն աչքերը կը բանար, որպէս զի ուշադրություն գրաւելու առիթներէ խոյս տայ: «Մշակի» շատ յօդուածները արտատպուեցան «Հայրենիքի» մէջ, ինչպէս նաև Արծրունիի «Էվելինա»-ն ամբողջապէս: Ցարաբերությունները աւելի պիտի ընդարձակուէին. հանգուցեալ Գրիգոր Արծրունի տրամադրություն յայտնած էր յատկապէս «Հայրենիքի» համար գրուած առաջնորդողներ խրկել ատ թերթին՝ Պոլիս: Բայց «Հայրենիք» որ 1891 յուլիսի սկիզբը հիմնուած էր, մինչև 1892 յուլիս երեք անդամ դատարանի դատապարտուեցաւ. համագումար՝ վեց ամիս, մինչ որ քիչ բան չէ մէկ տարուան մէջ, մանաւանդ նոր թերթի մը համար: Վերջին փակումը տևած էր չորս ամիս, ու երբ նորէն երևնալու հրամանը ստացաւ, շատ բան փոխուած գտաւ. կովկասեան թերթերուն մուտքը Պոլիս արգելուած էր. «Մշակի» և Արծրունիի անուններուն արտասանումը քաղաքական ոճրագործություն կը համարուէր: Ծայրայեղ խստություն ընդհանուր կերպով Ռուսաստանի վերաբերեալ ո և է համակրանքի արտայայտության դէմ: Օրինակով մը գաղափար տամ ան ատեն տիրապետող տրամադրություններու մասին: Ռուսիոյ վրայ խօսուած ատեն «Հայրենիքի» մէջ պիտի գրուէր թէ բնակիչներուն թիւը հարիւր քսան միլիոն է: Գրաքննիչը մէկ երրորդը ղեղչեց, առարկելով թէ «շատ է», ութսուն միլիոնը կը բաւէր: «Ռուսները այսքան շատ ցոյց տալը աղէկ չըլլար Թիւրքիոյ մէջ»՝ ըսաւ:

Ասանկ ապուշ միջավայրի մը մէջ «Հայրենիք» շատ վարպետությամբ կը շարժէր: Կովկասեան հանդէսներէն յօդուածներ կ'արտատպուէին լեզուական փոփոխությամբ, առանց ծագումի յիշատակության. քննադատականներ կը գրուէին գրքերուն վրայ, որոնք առանց քաղաքական ձգտումի էին:

Օր մը այսքանն ալ վերջացաւ, «Հայրենիքի» ջնջումովը:

—

Ամ տասը տարուան անցեալը որքան որ ալ պակասաւոր եղած ըլլայ, ատ ժամանակամիջոցին որքան որ ալ անհնարին եղաւ կովկասեան կեանքն ու գրականությունը կատարեալ ուսումնասիրությամբ ծանօթացնել Թիւրքիոյ հայերուն, բայց և այնպէս եթէ «Արևելքի», «Մասիսի», «Հայրենիքի» հրատարակությունները կարելի ըլլար հատորի մը մէջ ամփոփել, պիտի տեսնուէր որ եթէ ոչ տաղանդաւոր բայց գոնէ շատ խղճամիտ աշխատություններու սկզբնաւորություն եղած է կովկասեան գրականության ուսումնասիրությանը համար: Մեր հանրային կեանքի պարագաները ձեզի ծանօթ են. փոթորկալից կեանք, իրարու յաջորդող ծանրածանր դէպքեր չթոյլատրեցին հանդարտ աշխատություն մտքի: Բայց ինչ որ ալ ըլլայ, չեմ կարծեր թէ Թիֆլիսէն վերադարձող ո և է անծանօթ տիկնոջ մը խօսակցությունը, և ատ առթիւ «Մասիսի» թերթևամիտ մէկ հրատարակությունը կրնան նկատուել իբր մարմնացում Թիւրքիոյ հայոց համակրություններուն և դատաստաններուն ռուսահայոց գրականության նկատմամբ:

Ենթադրուածէն շատ աւելի համակրական են Թիւրքիոյ հայերուն զգացումներն ու գաղափարները ռուսահայ գրականության համար: Մեր ժողովուրդը թրքահայ գրական հիմնարկության մը, կամ գրողի մը դրուատիքի փառաւորագոյն տիտղոսը ռուսահայ անունի մը հետ բաղդատության մէջ կը կարծէ գտնել: «Հայրենիքի» համար էն մեծ գովեստը տրուած կը համարուէր ըսելով՝ «Կ. Պոլսոյ մեր «Մշակն» է»: Վերջին տարիները յայտնուած մեր էն զօրեղ հրապարակագիրը, Յովհաննէս Շահնազար, (խընդրեմ չի շփոթել ձեր կողմերը գտնուող պ. Շահնազարեանի մը հետ) փառաբանելու համար ամեն հայ կ'ըսէր՝ «Պոլսոյ Գրիգոր Արծրունին է:» Պոլսեցի վիպասան մը եթէ Բաֆֆիի հետ բաղդատի, փառքի մի ուրիշ գոհացում չի կայ իրեն համար: Բաղդատության աս եզրները կրնան իրականության համապատասխանել կամ ոչ, բայց ատ համեմատությունները նշան մը չեն թէ Թիւրքիոյ հայերը որպիսի յարգական համակրանք կը տածեն ռուսահայ մատենագրության համար:

—

Հիմա ատ բոլոր գրողները ցիրուցան են Եւրոպա ու Ամերիկէ. ազգին հիմակուան վիճակին մէջ իրենց վրայ ուրիշ պարտականություններ կը ծանրանան, անոնց համար կը գրեն: Բայց և այնպէս ռուսահայ մտքի արտադրությունները չի մոռցուեցան: Արշակ Զօպանեան հիմնելով Բարիզ «Անահիտը», մեծ տեղ մը պիտի տայ ռուսահայ գրականության ատ հանդէսին մէջ:

Ու վերջացնելու համար ըսեմ, որ եթէ արտասահման հրատարակուող թերթերու մէջ կ'երևին քննադատություններ ընդդէմ ռուսահայերու, կամ աւելի ճիշդը՝ ընդդէմ մաս մը ռուսահայերու, ատոնք բնաւ առընչություն չունին գրական հարցերու հետ: Ատոնց մասին «Մշակի» մէջ որ և է խնդիր ծագած չըլլալով, հարկ չեմ տեսներ դիտողություններ ներկայացնել: Կը բաւականանամ միայն ըսելով թէ՝ ատոնցմէ շատերուն նիւթը «Մշակէն» առնուած է: Թէ գաղթականներու և թէ ուրիշ գործերու մասին «Մշակի» տեղեկությունները, խմբագրականները առաջնորդած են գրողները: Վերջապէս «Մշակէն» աւելի ռուսահայ ըլլալ կարելի չէ:

***

ոչ թատրոնական գեղարուեստ. խմբի մէջ աչքի է ընկնում իր տաղանդով միայն պ. Աբաշիձէ։ Թէ «Կրեչինսկու հարսանիքը», թէ «Սէր և Նախապաշարմունքը», որ խաղացին նոյեմբերի 5-ին, առանձին տպաւորութիւն չը թողին հասարակութեան վրա։ Սակայն վրաց լրագրները երկինք են բարձրացնում դերակատարներին. ինքնախաբէութիւն։ Վերջին ներկայացումը, հինգշաբթի, նոյեմբերի 12-ին, տրվեց հիւանդ դերասանուհի իշխ. Աւալօվայի օգտին, որը 28 տարի ծառայել է բեմին։ Ցարգելի դերասանուհուն կենդանի գերեզման մտցրին, նոյն իսկ խելագարութեան հասցրին, մի խումբ ինտրիգան մարդիկ իրանց կեղտոտութիւններով՝ մի ուրիշին բարձրացնելու համար և այսօր այդ մի և նոյն մարդիկ կեղծ արտասուք են թափում, իբր թէ ափսոսում են և ներկայացումներ են սարքում հիւանդի օգտին։ Դրան կասեն՝ «գնա մեռիր—արի սիրեմ»։ Իշխանուհի Աւալօվա վերին աստիճանի յարգելի անձնաւորութիւն է՝ թէ իբրև մարդ և թէ իբրև դերասանուհի, և հասարակութիւնը պատուեց նրա անցեալ ծառայութիւնը՝ իր ներկայութեամբ։ Thaleia

ՆԱՄԱԿ ՇՈՒՇՈՒՑ

—

Նոյեմբերի 10-ին

Նոյեմբերի 8-ին, կիրակի, ցերեկվայ ժամը 11-ին, Բարեգործական ընկերութեան ընթերցարանի դահլիճում նշանակված էր նոյն ընկերութեան տեղական ճիւղի ընդհանուր ժողովը, որի պարապմունքի առարկաներն էին՝ ընդհանուր ժողովի նախագահի և քարտուղարի ընտրութիւն, վերաստուգող յանձնաժողովի երեք անդամների ընտրութիւն և քննութիւն ու հաստատութիւն առաջիկայ 1899 թուականի նախահաշիւ։ Ժողովին ներկայ էին 30 անդամ։ Գաղտնի քուէարկութեամբ ընդհանուր ժողովի նախագահ ընտրվեց Թովմաս Մեհերեան և քարտուղար՝ Յովսէփ Մելիք-Շահնազարեան։ Վերաստուգող յանձնաժողովի անդամներ ընտրվեցին՝ Անդրէաս Տէր-Յարութիւնեան, Պօղոս Հասան-Ջալալեան և Գրիգոր Թորոսեան, որոնք, ներկայ տարին լրանալուց, պիտի ձեռնարկեն քննելու ընկերութեան վարչութեան և գրադարան-ընթերցարանի 1898 թ. հաշիւները։ Ընդհանուր ժողովը քննութեան առնելով վարչութեան 1899 թուականի համար կազմած նախահաշիւը, մի քանի անհրաժեշտ փոփոխութեամբ՝ հաստատեց։ Նախահաշիւից երևաց, որ ընկերութիւնը առաջիկայ տարի ժուռք է սպասում 2120 բուբլի և ծախք՝ նոյնքան։ Գրադարան-ընթերցարանի համար որոշած ծախսի գումարը կազմում է 1330 բուբլի։ Ժողովը վերջացաւ ժամը 1-ին։

Ի դէպ. վերաստուգող պարոնների վրա սրբազան պարտականութիւն է դրվում անաչառ կերպով քննելով բոլոր հաշիւները, պարզել հասարակութեան առաջ ընկերութեան պաշտօնատար անձանց հասցէներին ուղղած այն մի շարք անմիտ զրպարտութիւնները, որոնք, ստուգութիւնից խուսափող մարդկանց շնորհիւ պարբերաբար հրապարակ են գալիս Թիֆլիսի մի թերթի էջերում և հաղ իւղի տեղ ընդունել տալիս միամիտ ընթերցողներին։ Հարկաւոր է հասկացնել խարդաւանքների սիրահար պարոններին, որ անտեղի կերպով անուանարկել մի օգտակար հիմնարկութիւն, որպիսին է գրադարան-ընթերցարանը, կը նշանակէ՝ ոչ միայն անհաճելի այլ և ստոր գործ կատարել։ Թ.

ՆԱՄԱԿ ԿԱՂԶՈՒԱՆԻՑ

—

Նոյեմբերի 5-ին

Մօտ օրերումս դարձեալ երկու ամուսինների բաժանման գործի քննութեան ներկայ գտնվեցինք։ Քննութիւնից երևաց, որ այդ ամուսինը դուրս է արել իր հարազատ կնոջը տանից, նրա պտղնկութեան համար, և այլևս ոչ մի կերպ և ոչ մի պայմանով չէ ուզում կենակցել նրա հետ։ Նոյն իսկ նա պատրաստ է մինչև մահ առանց ամուսնանալու մնալ՝ եթէ չը լուծվի իրանց ամուսնական կապը։ Երկու կողմից ևս կանչված էին շատ վկաներ, բայց նրանցից ոչ մէկն ակնյայտնի փաստերով չը կարողացաւ վկայել պտղնկութիւնը, և շատերը ծանծուում էին իսկական ճշմարտութիւնն ու թագցնում... Իսկ կին ամուսինը՝ ոչ մի բողոք չունէր իր ամուսնու դէմ և համաձայնում էր նորից կենակցելու նրա հետ՝ միայն այն պայմանով, որ իր ամուսինը բաժանվի եղբօրից, որովհետև վերջինս ծուռ մտքով է նայում, հանգիստ չէ տալիս իրան, որից առաջ է գալիս հասարակութեան մէջ տարածված անվայել բամբասանքները։ Այդ մասին վկայեցին կնոջ կողմից կանչված վկաներից մի քանիսը։ Մենք ելի ներկայ ենք եղել այդ տեսակ գործի քննութեան ուրիշ անգամներ և այն եզրակացութեան ենք եկել, որ ամուսնական հարցի մէջ ոչ ոք չէ ուզում կամ չէ համարձակվում վկայել ճշմարտութիւնը, որը կարող է լուծել ամուսնական կապը, այլ աշխատում է ամեն կերպ ծածկել ճշմարտութիւնը՝ յօգուտ չը բաժանվելուն... Հետևաբար այդ կարևոր ու ծանր հարցի լուծումը երբէք չէ կարելի սպասել վկաներից, ինչպէս այդ հաստատվեց մասնաւորապէս Կաղզուանում՝ մի քանի կենդանի օրինակներով, և այդպիսով այդ դժբաղդ զոհերի բաղդի քանալին մնում է հոգևոր բարձր իշխանութեան ձեռքում, որը, մեր կարծիքով, պէտք է աչքի առաջ ունենայ այն, թէ երկու ամուսինների յարաբերութիւնները ինչպէս են և ըստ այնմ վճիռ տայ, փոխանակ նայելու կասկածելի վկաների խօսքերին։ Սակայն՝ դժբաղդաբար, այդպէս չէ լինում ու միշտ դժբաղդացածները անբաժան են մնում։ Հէնց այս վերջին ամուսինների բաժանման համար ոչ մի փաստացի վկայութիւն չեղաւ, ուրեմն՝ ըստ սովորականին՝ հոգևոր իշխանութիւնը չի լուծի նրանց պակը։ Սակայն նրանց յարաբերութիւնը այն աստիճան լարված է, որ նոյն իսկ քննութեան ժամանակ նրանք միմեանց վրա էին յարձակվում անվայել հայհոյանքներով... Էլ ինչ ամուսնական սրբութիւն, էլ ինչ կապ, էլ ինչ համերաշխութիւն կարող է լինել նրանց ընտանեկան կեանքի մէջ... Վերջապէս՝ ինչ պէտք է սովորեն այդ տեսակ ընտանիքներում զաւակները. ինչ մարդիկ կը դառնան նրանք։ Մ. Ղազարեանց

ՆԱՄԱԿ ԹՄԲԱԳՐՈՒԹԵԱՆ

—

Թիֆլիս, նոյեմբերի 11-ին

Խնդրում եմ հիւրընկալել հետևեալ երկտողը։ Գուցէ շատերի յիշողութեան մէջ դեռ թարմ է 80/81 թուականներին «Մշակի» մէջ լոյս տեսած մի գրութիւն, որ նուիրված էր Ներսիսեան դպրոցի այն ժամանակվայ փոքրահասակ սան՝ Արտակ Տէր-Սարգսեանի բնական գիտութեան և ընդհանրապէս մեքենագիտութեան մէջ ցոյց տուած արտաքոյ կարգի ընդունակութեան և եռանդին։ Այսօր ուրախութեամբ մատնանիշ ենք անում այդ փաստը։ Ինչպէս յայտնի է մամուլից և մասնագէտների մէջ տարածված ընդհանուր կարծիքից, ներկայումս յիշեալ Արտակ Տէր-Սարգսեան հնարած ունի մօտ քսան զանազան մեքենաներ, որոնք կարող են մեծ դեր կատարել մեր տնտեսական և արդիւնաբերական ձեռնարկութիւնների մէջ։ Ցանկալի է, որ մասնագէտները և դրամատէրերը՝ օգտվելով ներկայ հաղուագիւտ դէպքից, ըստ կարելւոյն օգնէին երիտասարդ հայ հնարագէտին՝ արտօնութիւն ձեռք բերելու գործում։

Ց. Ամբրահեան

ՆԱՄԱԿ ԹՄԲԱԳՐՈՒԹԵԱՆ

—

Թիֆլիս, նոյեմբերի 13-ին

Ճշմարտութիւնը վերականգնելու համար, խնդրում եմ «Մշակի» մօտակայ համարներից մէկում տպէք հետևեալը։ Զրկինենց եկեղեցու միաբան Սիմէօն ք. Աբրահամեանցի և իմ գործի քննութեան մասին՝ որ տեղի ունեցաւ նահանգական դատարանում, «Մշակի» № 206-ի մէջ տպված էր՝ իբրև թէ քահանայ Աբրահամեան հանձնարարվել է հաշվել, եթէ ես իմ տուած լուրը կը հերքեմ նոյն լրագրի մէջ, որտեղ առաջ տպված էր, և որ իբրև թէ ես ընդունել եմ։ Դա սխալ է. եղելութիւնն այս է. պ. Նախագահի առաջարկութեանը՝ գործը հաշտութիւնով վերջացնել, քահանայ Աբրահամեան յայտարարեց, որ ինքը իբրև քահանայ պատրաստ է ներելու, եթէ ես նոյն լրագրի մէջ իմ գրածը կը հերքեմ։ Ես այս առաջարկութիւնը բացէ ի բաց մերժեցի՝ ասելով, որ իմ տուած լուրը տէր հօր վերաբերմամբ զուտ ճշմարտութիւն է, որ կը հաստատեն իմ վկաները։ Այնուհետև պ. նախագահը գանգատաւոր քահանայի համաձայնութեամբ առաջարկեց լինճ գրել լրագրի մէջ գոնէ՝ թէ «իմ գրածի մէջ փոքրիկ անճշտութիւն է սպրդել», առանց յիշելու այդ փոքրիկ անճշտութիւնը։ Ես ես, ի նկատի ունենալով գանգատաւորի քահանայական կոչումը և շատերի խնդիրքը հաշտութեան մասին, ընդունեցի նախագահի առաջարկած վերոյշեալ բանաձևը, որով գործն ընդմիշտ վերջացած համարվեց։ Ս. Շահվերդեան

ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԵՐ

—

«Բաղմավէպ» ամսագրի նոյեմբերի համարի մէջ կարդում ենք. «Ի սէր գիտութեան և երկրաբանական հետազօտութեանց զոհուեցաւ հանկարելին Ա. Արծրունի, որ Ալիշանով ուսաւ մայրենի լեզուն, գիտութիւնը «Մշակով» մշակեց ի հայս, և Գերմանիոյ համալսարաններու մէջ հմտանալի հանքաբանական դասախօսութեամբք հռչակուեցաւ մեծ գիտնական հայ անձնաւորութիւն մը, պարծանք հայութեան և Արծրունի տոհմին»։

—

Մենք յայտնել էինք «Մշակի» մէջ, որ Թիֆլիսի «Փառքի տաճար» կոչված թանգարանում բացված է պատկերների ցուցահանդէս, պատկերները իսկականները չեն, այն նրանց գրաւիւրներն են—ընդօրինակութիւնները։ Խորհուրդ ենք տալիս այցելել ցուցահանդէսը և ծանօթանալ բազմաթիւ նշանաւոր գործերի այդ գրաւիւրների հետ։ Այդտեղ կան թէ միջնադարեան և թէ նոր ժամանակի հռչակաւոր նկարիչների գործերը։ Անդրիսի հանճարներ, ինչպէս են՝ Բաֆայէլ, Լէօնարդօ դա Վինչի, Միկէլ Անջելօ, Կորրեջիօ, Տացիան, Ռուբէնս և ուրիշներ, որոնք տուել են աշխարհին անմահ գործերի մի մեծ շարք, ցոլացնում են իրանց աչքի ընկնող ոյժը նոյն իսկ գրաւիւրների մէջ և այցելուն մեծ հաճոյութեամբ կանգնում է նրանց ստեղծագործութիւնների այդ ստուերագծերի առաջ։ Նոր նկարչական դպրոցի ներկայացուցիչներից աչքի են ընկնում ֆրանսիական և իտալական նկարիչներ և փոքր թիւով հօլանդական և ուրիշ ազգերի ներկայացուցիչներ։ Այդ մասում կան Ժերօմի, Պիլօտու, Դիդերի, Շարլբէնի, Բօքէրի և շատ ուրիշ նշանաւոր նկարիչների գործեր։ Ցուցահանդէսից ստացած եկամուտը յատկացրած է կայրերի խնամող ընկերութեան օգտին։ Միխիթարական է, որ այցելուների թիւը շատ է։

—

Անդրկովկասի գիւղերում վերջին տարիներս սկսվել են տարածվել զանազան տեսակ գիւղատնտեսական գործիքներ, որոնց օգուտն սկսել է համոզեցուցիչ դառնալ մեր երկրագործների համար։ Ցանկանալով կեանքի այդ պահանջին բաւարարութիւն տալ, Կովկասեան Գիւղատնտեսական ընկերութեան խորհուրդը իր վերջին նիստում որոշեց բանալ գործիքների պահեստ և ժամակարարել ձեռնտու պայմաններով գործիքներ մեր գիւղատնտեսներին։ Ընկերութիւնը յոյս ունի իր սեփական միջոցներով կազմակերպել այդ գործը։ Մինիստրութիւնն էլ պատրաստակամութիւն է յայտնել նպաստել այդ գործի իրականացման։

—

Պետերբուրգից հեռագրում են «Русскія Вѣдомости» լրագրին. «Լաղարեան ճեմարանի էքստրա-օրդինար պրոֆէսորի պաշտօնակատար Խալաթեանց նշանակված է նոյն ճեմարանի տեսչի պաշտօնակատար՝ պրոֆէսորական պաշտօնի վերապահութեամբ»։

—

«Արարատ» ամսագիրը հաղորդում է, որ Հռիփսիմէի վանքի վերանորոգութեան ժամանակ գտնվել է աւագ սեղանի ետև, արևելեան պատի վրա, Կոմիտաս կաթողիկոսի արձանագրութիւնը, քանդակված մի առանձին քարի վրա։ Այդ արձանագրութիւնը, իբրև հին դարերի գրութիւն, մեծ արժէք ունի հայոց գրականութեան համար։

—

«Каспій» լրագիրը հաղորդում է, որ Անդրկովկասեան երկաթուղին էլ ժանտախտի դէմ մի քանի միջոցներ է ձեռք առել։

—

«Русскій Трудъ» լրագիրը հաղորդում է, որ Բաքուի նաւթատանքերը օտարերկրացիներին ծախելու անհարմար հետևանքներից մէկն այժմ շօշափելի կերպով զգացվում է. նաւթային մընացորդներն սկսել են սաստիկ կերպով թանգանալ. մասնաւորապէս, որ առաջ Մոսկվայի ֆաբրիկաները և գործարանատէրերը գնում էին Բաքուում պուդը 3—4 կոպէկ, այժմ ծախվում է 12½ կոպէկ։

—

ՍՂՆԱԽԻՑ մեզ գրում են. «Մեր քաղաքը, չնորհիւ իր թոյլ և անընդունակ ղեկավարների, անհոգութեան է մատնված։ Կովկասի քաղաքներից գուցէ ոչ մէկը այնքան կեղտոտ չը լինի, ինչքան մեր քաղաքը։ Փողոցներում և հրապարակներում սարսափելի դարշահոտութիւն է տիրում։ Քաղաքը չունենալով հասարակական արտաքնոցներ, ամեն մի անկիւն ծառայում է իբրև արտաքնոց... Չը գիտենք, ի՞նչ սանիտարական յանձնաժողովը, եթէ կայ, չէ մտածում առողջապահական պայմանների մասին։ Երկու տարի առաջ երբ այստեղ ընտրվեց յանձնաժողով ժանտախտի առաջն առնելու համար, այն ժամանակ յանձնաժողովի անդամները մի փոքր ժամանակ ցոյց տուեցին եռանդ, փողոցներն ու հրապարակները մաքրվեցին. քաղաքի արտաքինը կերպարանափոխվեց, բայց «ծակ ու ծուկերը» մնացին լի աղբով... Բարեբաղդաբար մեր քաղաքի կլիման առողջարար է, թէ չէ հրապարակների դարշահոտութիւնից միշտ անպակաս կը լինէին այստեղ զանազան հիւանդութիւններ։ Ինչու համար են մեր քաղաքի ճանապարները, եթէ բոլորովին չեն ծառայելու քաղաքի շահերին։ Մայթերի և հացթուխների մէջ՝ կամայականութիւնները սովորական են»։

ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ՆԱՄԱԿ ՊԱՐՍԿԱՍՏԱՆԻՑ

—

Սալմաստ, նոյեմբերի 2-ին

Սալմաստի յաջորդին Թաւրիզ ուղարկելուց յետոյ Զարղամ ձերբակալել է տալիս հաֆթվանցոց և բանտարկում է, ասելով, թէ նրանք «ղաչաղ»-ներ են պահում իրանց գիւղում և թէ Սմիր-Նիզամից հրաման է սպացված պաշարել գիւղը՝ Մահլամի նման։ Ժողովուրդը չփոթվում, երկիւղի մէջ է ընկնում։ Երդվում են, որ անմեղ են, աղաչում, պաղատում են, բայց ի զուր։ Միայն 100 թուման կանխիկ վճարումով հազիւ կարողանում են համոզել Զարղամին, թէ Հաֆթվանում ղաչաղներ չը կան, և ազատվում են բանտից։—Ձերբակալվեց նաև Մահլամի Տէր-Վարդան քահանան և բանտարկվեց ու գանակոծվեց, մինչև որ 50 թուման փրկանք վճարելով ազատվեց։

Ներկայ ծանր ժամանակներս Սալմաստում Ատրպատականի անգլիական ընդհանուր հիւպատոս Վուդ։ Մի ամիս էր նա Ուրմի էր գտնվում և Մահլամի դէպքը լսելով՝ փութացել էր իսկոյն ճանապարհ ընկնել այս կողմը։ Բարի լուրը կայծակի արագութեամբ տարածվեց ամբողջ Սալմաստում և հալածված, չարչարված քրիստոնեայ ժողովուրդն սկսեց մի քիչ ազատ շունչ քաշել։ Հիւպատոսն ուղղակի Դիլման էր գնացել նախ, կարծելով որ այնտեղ հիւրանոցներ կան, և զզվելով մեկնել էր դէպի Ղալասար, ուր իջևանել էր որդի Բ. Արզումանեանների տանը։ Սկսվում է պաշտօնական քննութիւն՝ Մահլամի կոտորածի մասին և հեռագրութիւնը հաղորդում է Թէհրան սոսկալի դէպքի քստմնելի մանրամասնութիւնները։ Այժմ սարսափի մէջ են Զարղամ և Հաջի-խանը, որոնք սարքել են այդ գործը։

Անգլիական միջամտութեան հետևանքն այն եղաւ, որ նոյեմբերի 25-ին Սմիր-Նիզամը և Քարգիլարը հեռագրեցին Սարֆարազ Իթալլի-Թովլէին՝ որ Սալմաստի կառավարիչ Հաջի-Խամայիլ-խանը պաշտօնից զրկված է և հրամանագիներ ուղարկեցին Սարֆարազին՝ հայերի հետ քաղցրութեամբ և սիրով վարվել, դադարեցնելով սկսված բոլոր հալածանքները։ Սակայն այսքանը բոլորովին փոխարինութիւն չէ կարելի համարել մորթված 9 անմեղ մարդկանց արեան համար և յուսալի է, որ այդ բոլոր ոճիրների բուն հեղինակը կարժանանայ իր արդար պատժին։

Առաջնորդ Այվազեան հեռագրել է Ախթամարի քահանայ տէր-Թադէոսին, իբրև տեղակալ Խաչիկ վարդապետին՝ նայել ազգային գործերին մինչև նրա վերադարձը։

Դեռ հարիւրաւոր թշուառ գաղթականներ մընում են այստեղ և համարեա ամեն գիւղում նրանցից կան։ Դրանց վիճակը շատ ցաւալի է և յուսահատական։ Անցեալ տարի ցորենն առատ էր և էժան և օգնողներ էլ անպակաս էին։ Դեռմանացի պատուոր Հանց Ֆիշէր, Թաւրիզի Հայաստեաց բարեգործական ընկերութիւնը, ամերիկեան միսիոնարներ և տեղացիներ շատ օժանդակեցին նրանց՝ նպաստներ բաժանելով։ Ղալասարում հաստատվեց մի որբանոց, ուր 50—60 անտէր-անխնամ երկսեռ մանուկներ պատսպարվեցին, ազատվելով սովամահ լինելուց։ Բայց այս տարի Սալմաստում համարեա թէ սով է, ցորենն այժմ ծախվում է 7—8 թուման, որ անցեալ տարվայ երեքպատիկն է արդէն, իսկ օգնող բնաւ չը կայ։ Ս.

ԱՐՏԱՔԻՆ ԼՈՒՐԵՐ

—

—Ամերիկան կառավարութիւնն էլ, հետևելով Անգլիայի օրինակին, պատերազմական պատրաստութիւնների վրա է։ Կանոնաւոր զօրքի տասն գնդեր հրաման ստացան պատրաստվել արևադարձային երկրներում ծառայելու։ Տեղեակ շրջաններում հաւատացնում են, որ եթէ սպանիական կառավարութիւնը չընդունի ամերիկական առաջարկութիւնը, պատերազմական գործողութիւնները կը վերանորոգվեն և Ամերիկան կը գրաւէ ոչ միայն Ֆիլիպեան կղզիները, այլ և սպանիական այն կալուածները, որոնք ցանկալի կը համարվեն։ Ասում են, որ արդէն դէպի Եւրոպա է ուղարկված ամերիկական նաւատորմը։

„ՄՇԱԿԻ“ ՀԵՌԱԳԻՐՆԵՐ

ՌՈՒՍԱՍՏԱՆԻ ԳՈՐԾԱԿԱԼՈՒԹԻՒՆԻՑ

—

ՊԵՏԵՐԲՈՒՐԳ, 13 նոյեմբերի։ Ներքին գործերի մինիստրը որոշեց՝ նորից թոյլատրել «Новое Время» լրագրի հատոր ծախվելը։

ՄՕՍԿՎԱ, 13 նոյեմբերի։ Հերցոգ Աբրուցկի գնաց Սիբիր։

ՊԱՐԻԶ, 13 նոյեմբերի։ Վճռաբեկ ատեանը երես առ երես կանգնացրեց Պիկարին ու գեներալ Բօժէին։

ԻՕԿՕՀԱՄԱ, 13 նոյեմբերի։ Սէուլի քաղաքական կուսակցութիւնների միջև ընդհարումն տեղի ունեցաւ, որի ժամանակ մի կողմը կորցրեց 23 հոգի սպանված։ Երկիւղ են կրում, որ նորից արիւնահեղութիւն կը պատահի։

ԻՕԿՕՀԱՄԱ, 13 նոյեմբերի։ Սէուլից հեռագրում են որ բեֆօրմների կուսակցութիւնը ապստամբութիւն է ձեռք բերում։ Մի քանի պաշտօնեաներ, որոնց թւում և Կօրէյայի դեսպանը եապօնիայում, արտաքսվեցին։ Կայսրը յայտնեց պետութիւնների ներկայացուցիչներին, որ կամենում է բեֆօրմներ մտցնել։

ՊԱՐԻԶ, 13 նոյեմբերի։ Ցուրլինդէն ստորագրեց մի հրամանագիր, Պիկարին դեկտեմբերի 12-ին զինուորական դատարանին ենթարկելու մասին՝ կեղծումներ անելու և կեղծումներից օգտվելու համար։

ԼՕՆԴՕՆ, 13 նոյեմբերի։ Զինուորական մինիստրութիւնը պատուիրեց մինչև 7 միլիոն փամփուշտ։ Պայմանագրի մէջ ասված է, որ պատուէրը «շտապողական» է։

ՊԱՐԻԶ, 13 նոյեմբերի։ Վճռաբեկ ատեանը առաւօտեան լսեց Պիկարին, որը յետոյ տարվեց բանտը, նախաճաշիկի ժամանակ, և յետոյ նորից բերվեց դատարան՝ նոր ցուցմունքներ տալու համար։

ԼԱՆՍ, 13 նոյեմբերի։ Ֆօր հասաւ այստեղ և անմիջապէս գնաց հանքայրերը, հագաւ հանքագործի հագուստ և իջաւ հանքայրը՝ 189 մետր խորութեամբ։

Խմբագիր՝ ԱԼԷՔՍԱՆԴՐ ՔԱԼԱՆԹԱՐ
Հրատար.՝ ԱՐԾՐՈՒՆՈՒ ԺԱՌԱՆԳՆԵՐ

ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ

ԱՆԴՐԿՈՎԿԱՍԵԱՆ ԵՐԿԱԹՈՒՂԻ

—

Մարդատար № 1 գնացքը դուրս է գալիս ԲԱԹՈՒՄԻՑ դէպի ԹԻՖԼԻՍ յերեկվայ 4 ժամին և 15 րոպէին. Թիֆլիսէ է հասնում առաւօտեան 8 ժամ 38 րոպէին։ Դուրս է գնում ԹԻՖԼԻՍԻՑ դէպի ԲԱԹՈՒՄ առաւօտեան 9 ժամ և 20 րոպէին. Բաթումէ է հասնում երեկոյեան 8 ժամ և 52 րոպէին։

Մարդատար № 3 գնացքը դուրս է գալիս ԲԱԹՈՒՄԻՑ դէպի ԹԻՖԼԻՍ՝ երեկոյեան 10 ժամ 50 րոպէին. Թիֆլիս է հասնում երեկոյեան 5 ժամ և 9 րոպէին։ Դուրս է գնում ԹԻՖԼԻՍԻՑ դէպի ԲԱԹՈՒՄ՝ երեկոյեան 6 ժամ 10 րոպէին. Բաթումէ է հասնում առաւօտեան 7 ժամին։

Մարդատար № 2 գնացքը դուրս է գալիս ԲԱԹՈՒՄԻՑ դէպի ԹԻՖԼԻՍ՝ առաւօտեան 8 ժամ՝ 30 րոպէին. Թիֆլիս է հասնում երեկոյեան 8 ժամ 30 րոպէին։ ԹԻՖԼԻՍԻՑ դէպի ԲԱԹՈՒՄ է դուրս գալիս՝ երեկոյեան 9 ժամ 15 րոպէին. Բաթումէ է հասնում յերեկվայ 12 ժամ՝ 59 րոպէին։

Մարդատար № 4 գնացքը դուրս է գալիս ԲԱԹՈՒՄԻՑ դէպի ԹԻՖԼԻՍ երեկոյեան 8 ժամ 40 րոպէին. Թիֆլիս է հասնում առաւօտեան 9 ժամ՝ 55 րոպէին։ ԹԻՖԼԻՍԻՑ դէպի ԲԱԹՈՒՄ է դուրս գալիս առաւօտեան 11 ժամ 20 րոպէին. Բաթումէ է հասնում առաւօտեան 5 ժամ 42 րոպէին։

ԱՌԱՋԻՆ ՄԱՍՆԱՒՈՐ ՀԻՒԱՆԴԱՆՈՑ
Բ. ՆԱՒԱՍԱՐԴԵԱՆԻ
(Կուկիա, Վօրոնցօվի արձանի հանդէպ)
Հիւանդներին ընդունում են ամէն օր, բացի կիրակի օրերից։
ԱՌԱՒՕՏՆԵՐԸ՝
Բ. Ա. ՆԱՒԱՍԱՐԴԵԱՆ—11—12 ժ. վիրաբուժութեան, վեներական (սիֆիլիս) և միզասեռ. հ.
Կ. Մ. ՉԻԿՈՎԱՆԻ—9—10 ժ. աչքի, ներքին և նեարդային հ.
Զ. Ի. ԲԱԲԱՆԱՍԵԱՆՑ—11—12 ժ. կանանց հիւանդ.
Ի. Ֆ. ՊՐՕՏԱՍԵՎԻՉ—12—1 ժ. ականջի, կոկորդի, քթի և կրծքի հ.
Ա. Պ. ԿԱՐԱՊԵՏԵԱՆՑ—1—1½ ժ. ներքին և երեխայոց հ.
Ա. Գ. ԳՈՒՐԿՕ—1¼—2¼ ժ. ներքին և միասեռական հ.
ԵՐԵԿՈՆԵՐԸ՝
Վ. Մ. ՄԱԽՎԻԼԱՁԷ—5—6 ժ. ներքին և երեխայոց հ.
Ա. Ն. ՇՊԱԿՕՎՍԿԻ—6—7 ժ. նեարդային (ելեկտրաբուժութիւն), վեներական և մորթի հ.
Բ. Ա. ՆԱՒԱՍԱՐԴԵԱՆ—6½—7 ժ.
Տ. Ի. ԲՈՒԴԵՆԿՕ հիւանդանոցումը քիմիական և խոշորացուցական հետազօտութիւններ է անում մէզի, խիպ, արեան, կաթի և այլն։
Վճար 50 կ. չքաւորները ձրի։ Համախորհրդի (կոնսիլիումի) և օպերացիայի համար առանձին։
Հիւանդանոցի վերատեսուչ՝
50—150 Բժշկապետ ՆԱՒԱՍԱՐԴԵԱՆ

Թ. ՄԱԼՈՒՄԵԱՆ
„ՄՏՔԻ ՄՇԱԿԸ“
(Մնում են փոքրաթիւ օրինակները)
ԳԻՆԸ 50 ԿՕՊԵԿ
Դիմել «Մշակի» Խմբագրատուն։
1—8

ԹԻՖԼԻՍԻ ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԳՐԱՎԱՃԱՌԱՆՈՑՈՒՄ

	Ր.	Կ.
ծախվում են՝		
1) Լ. ՍԱՐԳՍԵԱՆՑԻ՝ «Այց Թիւրքաց Հայաստանին» (սակաւաթիւ) . . .	—	60
2) Լ. ՍԱՐԳՍԵԱՆՑԻ՝ «Ժողովրդի կրթութեան գործը մեզանում»	—	20
3) Զ. Ս. ՄԻԼԼԻ՝ «Ազատութեան մասին»	1	20
4) Ս. ԱՒԵՏԻՔԵԱՆՑԻ՝ «Իրլանդիայի դատը»	—	80
5) Ս. ՍԱՐԳՍԵԱՆՑԻ՝ «Ագուլեցոց բարբառը»	2	—

5—12

ՇՈՒՏՈՎ ԼՈՒՍ ԿԸ ՏԵՍՆԻ
„ՄԵՂՈՒՆԵՐ“
բնագիտական գրքոյկը
Թարգմ. Լ. Լանգստրօտից 3—3

Ամերիկացի հռչակաւոր գեներալ Լու Վալէյսի գործերից
„ԲԷՆ-ՀՈՒՐ“
Պատմական վէպը անգլիերէն բնագրից հայերէնի թարգմանած լինելով, ցանկանում եմ հրատարակել։ Փնտռում եմ մի բարերար, որ տպագրութեան ծախսը ստանձնէ, արդիւնքը հայ որբերի յատկացնելու պայմանով. պատրաստ եմ այդ թարգմանութիւնը վաճառելու։ Դիմել հետևեալ հասցէով՝ Սալմաստ (Պարսկաստան), Միհրան Պաղտասարեան, Ղալասար գիւղը։ 5—5

ՄԻ ՈՒՍՈՒՑԻՉ կամենում է
ՄԱՍՆԱՒՈՐ ԴԱՍԵՐ
ունենալ ՀԱՅԵՐԷՆ լեզուից։
Դիմել Ներսիսեան դպրոց, ուսուցիչ Մուրադբէգեանին։ 3—6

ԹԻՖԼԻՍԻ ԻԳԱԿԱՆ ԳԻՄՆԱԶԻԱՅԻ ՄԻ ՈՒՍՈՒՑԻՉ բոլոր առարկաներից պատրաստում է աշակերտներ և աշակերտուհիներ՝ ՄԻՋՆԱԿԱՐԳ դպրոցների համար և տալիս է՝
Հայոց լեզուի դասեր
Հասցէն՝ Чавчавадзевская ул. д. Маркарова № 25. 2—6

ԹԻՖԼԻՍԻ ՀԱՅՈՑ ՀՐԱՏԱՐԱԿՉԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԵԱՆ վարչութիւնը յայտնում է, որ ԲԱԳՈՒԻ ԱՆԴԱՄՆԵՐԸ իրանց հասանելիք գրքերը կարող են ստանալ աշխատակից անդամ Աստուածատուր Վաչեանից։ 5—5

ԳՐԻԳՈՐ ԱՐԾՐՈՒՆԻ
ԹԻՒՐՔԱՑ ՀԱՅԵՐԻ ՏՆՏԵՍԱԿԱՆ ԴՐՈՒԹԻՒՆԸ
ԳԻՆՆ Է 20 ԿՕՊԷԿ
Գնել ցանկացողները պէտք է դիմեն «Մշակի» Խմբագրատուն։ 8—10

Հ. ԱՌԱՔԵԼԵԱՆ
ԶԷՅԹՈՒՆ
տեղագրական, ազգագրական, վարչական տեսութիւն։ (Արտատպած «Մշակից» մի քանի յաւելումներով)։ Գինը 20 կ.։
Դիմել այս հասցէով. А. Аракеляну, Редакція «Мшакъ». (չ. ո.) 1—10

ԼՈՒՄԱՑ
ԳԱԲՕԻ ԸՆՏԱՆԻՔԸ
Վէպ Թիֆլիսի կեանքից։
ԳԻՆՆ Է 60 Կ.
Վաճառվում է Թիֆլիսում՝ Կենտրօնական և Զ. Գրիգորեանցի Կովկասեան գրավաճառանոցներում։ Դիմել ուղղակի այդ գրավաճառանոցներին։ 6—10

ԲԺՇԿԱՊԵՏ Ե. Ի. ՖՐԱՆՑԻՈՒՍ
մասնագէտ կոկորդի, քթի և ականջի հիւանդութիւններին։
Ընդունում է 5—7 ժամը երեկոյեան. Վելեամինովսկայա փողոց, տուն № 4, Դումայի հանդէպ։
(Ա. չ. ո.) 30—30

Լոյս տեսաւ ՄԵՐ ԿԱԶՄԱԾ
1899 Թ. ՊԱՏԻ, ԾՈՒՅՑ ԵՒ ՍԵՂԱՆԻ ՕՐԱՑՈՒՅՑՆԵՐԸ
ՀԱՐՈՒՍՏ ՑՈՒԵԼՈՒԹՈՎ ԵՒ ԵՐԱԶԱՀԱՆՈՎ
Ցանկացողները թո՛ղ շտապեն մեզ յայտնելու, որպէս զի ժամանակին կարողանանք հասցնել։
Թիֆլիս՝ Մակար Զմշկեան
(Ե. չ.) 11—20

Լուսանկար Տէր-Ղևոնդեանի մօտ վաճառվում են
ԱՆԴՐԻԷԱՍ ԱՐԾՐՈՒՆՈՒ
ՄԵԾԱԴԻՐ և ՓՈՔՐԱԴԻՐ ՊԱՏԿԵՐՆԵՐԸ, որ արժեն 1 ր. 40 և 20 կօպէկ։ Դիմել՝ Тифлисъ, фотографу Теръ-Гевондянцу. 13—15

ԹԻՒՐՔԱՀՊԱՏԱԿ ՄԻ ԵՐԻՏԱՍԱՐԴ
որ Իտալիայի Նէապոլ քաղաքում սովորել է իտալական զանազան տեսակ պանիր շինելը, խնդրում է ձեռնհաս անձանց, օգնեն իրան նիւթապէս՝ Կովկասում կամ Ղրիմի որ և է քաղաքում պանրի գործարան բանալու։ Հասցէն ԹԵՕԴՕՍԻՅ, Армянское училище, Язичяну. 2—5

ԹԻՖԼԻՍԻ ՀԱՅՈՑ ՀՐԱՏԱՐԱԿՉԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆ
Նոր հրատարակութիւններ՝
1) ԽՈՐԱՄԱՆԿ ԱՂՈՒԷՍԸ (պատկերներով) 10 կ.
2) ՕՂԸ ԵՒ ԿԵԱՆՔԸ . . . 10 »
Հասցէն՝ ТИФЛИСЪ, Тифлисское Общество изданія армянскихъ книгъ. 2—3

Բ. Թ. ՎԱՀԱՆ ԱՐԾՐՈՒՆԻ
ԸՆԴՈՒՆՈՒՄ Է ՀԻՒԱՆԴՆԵՐ՝
մասնագիտաբար բգի, կոկորդի, քթի և ականջի հիւանդութիւններով։
Առաւօտեան 9—12 ժ.
Երեկոյեան 4—7 ժ.
Գօլովինսկի պրոսպ. № 28, տ. Աղաժանովի։ 6—10

ԹԻՖԼԻՍԻ ՀԱՅՈՑ ՀՐԱՏԱՐԱԿՉԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԵԱՆ
Գրասենեակումս վաճառվում են՝

	Ր.	Կ.
ԱԳԱԹԱՆԳԵՂՈՍԻ ՊԱՏՄՈՒԹԻՒՆԸ . .	1	»
ՍՏԵՓԱՆՆՈՍ ՏԱՐՕՆԵՑՈՒ ՊԱՏՄՈՒԹԻՒՆ.	2	»
ԹԻՖԼԻՍԵՑՈՑ ՄՏԱՒՈՐ ԿԵԱՆՔԸ . . .	1	50
ՂԵՒՈՆԴ ՊԱՏՄԱԳԻՐ	2	»
ԴԱՍԱԳԻՐՔ ԿՐՕՆԻ ուսուցիչների համար.	1	75
ԺԱՄԱՆԱԿԱԳՐՈՒԹԻՒՆ ՀԱՅՈՑ Դարտելի.	1	25
ՀԱՆՐԱՄԱՏՉԵԼԻ ԲՆԱԽՕՍՈՒԹԻՒՆ Լուսկեվիչի	1	»
ՀԱՆՐԱՄԱՏՉԵԼԻ ԱՍՏՂԱԲԱՇՈՒԹԻՒՆ Ֆըլամարիօնի	1	»
ԲՆՆԱԿԱՆ ՊԱՏՄՈՒԹԻՒՆ ՀԱՅՈՑ Գաբագաչեանի.	4	»
ՊԱՏՄՈՒԹԻՒՆ ՀԱՅՈՑ, Պալասանեանի .	1	50
ԱԿՆԱՑ ՀՆՈՒԹԻՒՆՔ, Ճանիկեանի . .	2	»
ՄԱՆԿԱԿԱՆ ԼՕՏՕ, (հայ., ռուս., ֆրանսերէն և վրացերէն)	1	20
ԱԶԳԱՅԻՆ ՋՕՋԵՐ, Պարոնեանի . . .	1	»
ԴԱՒԻԹ ԿՕՊՊԵՐՖԻԼԴ, Դիկկենսի . . .	1	»
ՎԷՊԻԿՆԵՐ և ՋՐՈՑՑՆԵՐ, Մօպասանի .	1	»
ՑՈ՞ ԵՐԹԱՍ, Սենկեվիչի	1	50
ՄԱՐԴ ԵՄ, Էբերսի	1	»

Դիմել՝ Тифлисъ. Тифлисское Общес. Изд. Арм. книгъ. 19—20



!!! ՀԱԶՈՒԱԳԻՒՏ ԴԷՊՔ !!!

Երկար ջանք գործ դնելուց յետոյ, վերջապէս, ինձ աջողվեց հնարաւորութիւն ստանալ վաճառելու՝ իր բանելովը և գեղեցկութեամբ նշանաւոր Ժընեվի «Փաւօրիտ» ժամացոյցները՝ բաց, սև պողպատից, բեմենտուար, լարված և խնամքով ստուգված, ծածկի վրա ոսկէ զարդարանք, որի վրա, ըստ ցանկութեան պատուիրողի, փորագրում եմ նրա ժամանակագրությունը գեղեցիկ չղթայով և ամերիկական ոսկէ բրելօկով՝

ՄԻԱՅՆ 5 ՌՈՒԲ. 25 ԿՕՊ.

2 հատ պատուէր տուողին 50 կօպ. զիջումն է լինում, 3 հատի համար՝ 1 ռուբլի։

ՆՈՑՆԳԻՍԻ՝ ԿԱՆԱՆՑ ԺԱՄԱՑՈՑՑՆԵՐ 1 ՌՈՒԲԼԻՈՎ ԹԱՆԳ։

Գրաւոր երաշխաւորութիւն 6 տարվայ համար։ Ուղարկվում է 1 ռուբլի սկզբնավճար ստանալուց յետոյ։

Հասցէն՝ ТОРГОВОЙ ФИРМѢ Г. КОЛТУНЪ ВЪ ВАРШАВѢ, складъ американскихъ и женевскихъ часовъ.

Բազմաթիւ շնորհակալական և գովասանական նամակներ։
(չ) Գրէյս-կուրանտներն ուղարկվում են ձրի։ 1—7

BATEAUX A VAPEUR FRANCAIS N. PAQUET ET C-ie
ՖՐԱՆՍԻԱԿԱՆ ՆԱՒԱԳՆԱՑՈՒԹԵԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆ
Ն. ՊԱԿԷ ԵՒ ԸՆԿ.
Կանոնաւոր և ուղղակի նաւագնացութիւն ՄԱՐՍԷԼԻՑ ԲԱԹՈՒՄ, չորեքշաբթի օրերը, երկու շաբաթը մի անգամ, սկսած յունվարի 25/6-ի չորեքշաբթիից,

Եւ հակառակը՝ Բաթումից Մարսէլ, մտնելով Տրապիզօն, Սամսօն և Պօլիս։ Մեկնում է Բաթումից՝ չորեքշաբթի, 25 նոյեմբերի (7 դեկտեմբերի) ՄԻՆԳՐԷԼԻ՝ չոգենաւը, նաւապետ ՇՆԼՏ։ Եւ այսպէս շարունակաբար, երկու շաբաթը մի անգամ, չորեքշաբթի օրերը, ժամը 4-ին ճաշից յետոյ։

Բաթումից Պարիզ ուղղակի հաղորդակցութեան տոմսակներ տրվում են սովորականից պակաս գներով։

Ապրանքների և ճանապարհորդների մասին տարբեր տեղեկութիւններ ստանալու համար թող բարեհաճեն դիմել ընկերութեան գործակատարներին՝

ԲԱԹՈՒՄՈՒՄ—պ. Վիկտոր դ'Արնօվին, Նաբէրէժնայա։ ԹԻՖԼԻՍՈՒՄ—պ. Օ. Գ. Բարեկենդանեանին, Սիօնի փող. նախկին Արծրունու քարվանսարա։ ԲԱԳՈՒ—պ. Ս. Դիլղարեանին, Կօլիբեակինսկայա հրապարակ։ ՆՈՎՈՐՈՍՍԻՅՍԿ—պ. Մելխիոր Հերշենրոդերին։ (Ե. հ. չ.) 18—20

ՀԱՅՈՒՀԵԱՑ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԵԱՆ
ԿԱՐՈՒՉԵԻԻ ԴՊՐՈՑՈՒՄ
Նոյեմբերի 15-ից կը բացվի ԼՈՒԱՑՔԱՆՈՑ, որտեղ աշակերտուհիները կը սովորեն հարթկել (глаженіе)։ Աշակերտուհիների թիւը սահմանափակ կը լինի և առաւելութիւն կը տրվի Կարուճևի դպրոցն աւարտողներին, որոնք կընդունվեն ՁՐԻ, իսկ կողմնակի աշակերտուհիները՝ 15 ռուբլի վճարով։

Պայմանների մասին մանրամասն կարելի է տեղեկանալ Կարուճևի դպրոցում (Գանօվսկայա, № 25)։ 4—5

ԷԺԱՆ, ԴԻՄԱՑԿՈՒՆ ԵՒ ՃԱՇԱԿՈՎ!!!



Գնեցէք ոսկեայ 56% զարնիտուր՝ ԱՊԱՐԱՆՋԱՆ, ՕՂԵՐ և ՄԱՏԱՆԻ՝ ոսկերչի չէնք, զուգած իսեատցիական բրելիանտներով, որոնք իրանց փայլով չեն զանազանվում իսկականից. մէջտեղում ամետիստ, զըմրուխտ և փիրուզա, փոխանակ 16 և 18 ռուբլու

ՄԻՄԻԱՑՆ 11 և 13 ՌՈՒԲԼԻՈՎ

ՆՈՑՆԸ ՄԱՐԳԱՐԻՏՈՎ՝ 4 ՌՈՒԲԼԻՈՎ ԱՒԵԼԻ։

Ուղարկվում է՝ երբ կը ստացվի 2 ռուբլի դրաւական. մնացածը վերադիր վճարով (налож. плат.)

Հասցէն՝ Главный складъ часовъ и золотыхъ вещей Шо-де-Фонъ въ ВАРШАВѢ. (I, չ.) 2—2

Дозволено цензурою, Тифлисъ, 13 Ноября 1898 г.
Типографія Грузинск. Издат. Т—ва, Лорисъ-Меник. ул. № 13.